ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԸՅՐ ԷՋՄԻԱԾԻՆ

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Բուլղարիայի պաշտպանության նախարար Դմիտր Գավլովը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի ուղեկցությամբ: Վեհարանում մեծահարգ հյուրին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Զրույցի ընթացքում պրն. Գավլովը խոսեց հայ և բուլղար ժողովուրդների բարեկամության մասին՝ նշելով, որ այն ունի դարերի պատմություն: Ապա մեծահարգ հյուրը որոշ տեղեկություններ տվեց Բուլղարիայի և Հայաստանի պաշտպանության նախարարների կողմից օրերս կնքված համակողմանի պայմանագրի մասին և ընդգծեց, որ այն լիիրավ կյանքի կոչելու համար շատ ցանկալի է ստանալ Նորին Սրբության օրհնությունը:

Ողջունելով և իր օրհնության պատգամը տալով երկու նախարարությունների ձեռնարկներին, Վեհափառ Հայրապետը իր հերթին ևս ընդգծեց հայ և բուլղար ժողովուրդների եղբայրական հարաբերությունների փաստը՝ ասելով, որ նրանց կապող օղակ է հանդիսացել ոչ միայն ընդհանուր հավատքը, այլև նրա հանդեպ ունեցած հավատարմությունը և պայքարը հանուն այդ հավատքի:

Ապա Նորին Սրբությունը խոսեց առաջիկայում կայանալիք մյուռոնօրհնության արարողության և Հայաստանում Քրիստոնեությունը պետականորեն ընդունելու 1700-ամյակի տոնակատարության մասին՝ շեշտելով, որ տոնակատարությունը կդառնա Եկեղեցիների ու ժողովուրդների բարեկամության իսկական շքահանդես:

Հանդիպումն անցավ ջերմ, անկեղծ մթնոլորտում:

ՍԻՐԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆ ԱՅՑԵԼԵՑ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 6-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Սիրիայի ժողովրդական ժողովի պատասխանատու քարտուղար, Հայ-սիրիական պատգամավորական խմբի անդամ Մուհամեդ Նիհաղ Մուշանտադին:

Ջերմ զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ հայ-սիրիական դարավոր կապերին: Բարձր գնահատելով Սիրիական պետության վարած

խաղաղասիրական գործունեությունը Մերձավոր Արևելքի տարածաշրջանում. Վեհափառ Հայրապետը իր խոր երախտագիտությունն արտահայտեց դարիս առաջին ցեղասպանության և 1988 թվականի սոսկալի երկրաշարժի օրերին սիրիական ժողովրդի ցուցաբերած մարդասիրական վերաբերմունքի համար: Ապա զրույցն ընթացավ Հայաստանի ներկա իրավիճակի, հայ-սիրիական հարաբերությունների հետագա զարգացման, ինչպես նաև Հայ եկեղեցու խնդիրների ու գործունեության շուրջ:

Պատասխան խոսքում իր հարգանքն արտահայտելով հայ ժողովրդի, նրա դարավոր մշակույթի և հոգևոր կենտրոն Ս. Էջմիածնի նկատմամբ, պրն. Մուշանտաղը շեշտեց, որ հայ ժողովուրդը ապրող, դեպի ապագան քայլող ժողովուրդ է, և ընդգծեց, որ իր պետությունը, ի դեմս Հայաստանի, տեսնում է ջերմ ու անկեղծ բարեկամի: Հարգարժան հյուրը ողջունեց նաև այն իրողությունը, որ Հայաստանն այսօր աշխարհին է ներկայանում իբրև ազատ ու անկախ պետություն:

Հանդիպմանը ներկա էին Հայ-սիրիական պատգամավորական խմբի փոխնախագահ Արամ Մանուկյանը, Պատգամավորական խմբի անդամներ, Արտաշատի քաղաքապետ Հովհաննես Աբրահամյանը:

ՖԻԴԵ-Ի ՆԱԽԱԳԱՀՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 7-ի երեկոյան Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՖԻԴԵ-ի նախագահ, Կալիֆոռնիայի Հանրապետության նախագահ պրն. Կիրսան Իլյումժինովին: Զրույցի ընթացքում հարգարժան հյուրը Վեհափառ Հայրապետին ծանոթացրեց սեպտեմբերի 15-ին Երևանում բացվող շախմատի օլիմպիադայի նախապատրաստական աշխատանքների ընթացքին, հակիրճ տեղեկություններ տվեց մասնակից երկրների թվի, մրցույթի անցկացման կարգի մասին: Պրն. Իլյումժինովը նշեց, որ Երևանը ընտրվել է հերթական օլիմպիադայի քաղաք ոչ պատահականորեն, քանի որ հայ ժողովուրդը շախմատի աշխարհին տվել է այնպիսի մեծ անուններ, ինչպիսիք են Տիգրան Պետրոսյանը, Գարի Կասպարովը, Ռաֆայել Վահանյանը:

Վեհափառ Հայրապետը ողջունելով հյուրին նրա խնդրանքով պատմեց Հայ Առաքելական եկեղեցու ավանդությունների և ծիսակատարությունների, մասնավորապես հաջորդ օրը կայանալիք մյուռոնօրհնության արարողության մասին: Նորին Սրբությունն իր ուրախությունն արտահայտեց այն առթիվ, որ շախմատային օլիմպիադան համընկնում է հանրապետությունում նախագահական ընտրություններին և հաջորդում մյուռոնօրհնությանը: Խոսքի ավարտին Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը հաջող և բարի ընթացք մաղթեց մրցաշարին:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանի շախմատի Ֆեդերացիայի նախագահ Վանիկ Զաքարյանը և ՖԻԴԵ-ի Եվրոպական 5-րդ գոտու նախագահ Գագիկ Հովհաննիսյանը:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻԻՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ

Սեպտեմբերի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Իրանի Իսլամական Հանրապետության Արտգործնախարարի ԱՊՀ երկրների և Եվրոպայի գծով տեղակալ Մահմուդ Վայեզին:

Ողջունելով մեծահարգ հյուրին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ Իրանի և Հայաստանի միջև ներկայիս բարեկամական հարաբերությունները պետք է զարգանան առավել լայն հունով և բազմակողմանիորեն: Կրոնների տարբերությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա մեր համագործակցությանը: Մենք պետք է համագործակցենք հանուն ընդհանուր նպատակների, ասաց Նորին Սրբությունը և շեշտեց հոգևոր արժեքների վերարժևորման, երիտասարդությանը բարձր բարոյական չափանիշերով դաստիարակելու անհրաժեշտության կարևորությունը:

Պրն. Վայեզին իր համերաշխությունն արտահայտելով Վեհափառ Հայրապետի խոսքերին, նշեց, որ այդ խնդիրները դարձել են համամարդկային հուզող խնդիրներ և այսօր դրանց լուծման ուղղությամբ անհրաժեշտություն է դարձել բոլոր եկեղեցիների և կրոնների միջև երկխոսություններ վարելը: Դա է իսկական համագործակցության նախապայմանը:

Հանդիպմանը ներկա էր Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Համիդռեզա Նիքքար Էսֆահանին:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 11-ին Վեհարանի հանդիսությունների սրահում Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայից, Բրազիլիայից, Կանադայից, Միացյալ Նահանգներից և Լյուքսեմբուրգից ժամանած ուխտավորների խմբին:

Հայրական քաղցր սիրով ողջունելով ներկաներին, Վեհափառ Հայրապետը խոսեց Վերածնունդ ապրող հայ ժողովրդի և հայ եկեղեցու մասին:

«Մեզ այսօր ժառանգություն են հասել մեր հայրերի նվիրումով ստեղծված մեծագույն արժեքներ, բայց մենք չպետք է գոհանանք եղածով, - ընդգծեց Նորին Սրբությունը, - քանի որ կյանքում կարևորը ոչ թե մեր ունեցածն է, այլ մեր արածը: Շարունակենք մեր հայրերի գործը՝ սրտում ունենալով նրանց հավատն ու նվիրումը, յուրաքանչյուրս կատարենք պարտքի մեր բաժինը և արժանավայել դիմավորենք 2001 թվականը»:

Վեհափառ Հայրապետը շեշտեց նաև, որ 3-րդ հազարամյակ ընթացող ճանապարհին առանձնակի կարևորվում է նոր եկեղեցականներ պատրաստելու և երիտասարդությանը բարձր բարոյական չափանիշերով կրթելու անհրաժեշտությունը:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Սեպտեմբերի 12-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր առաջին այցելությունը տվեց Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան տիկ. Կարոլա Մյուլլեր Հոլթքեմփերը:

Զրույցի ընթացքում տիկ. Հոլթքեմփերը նշեց, որ Հայաստանում իր ծառայության ընթացքում պետք է անի գերագույն կարելին՝ Գերմանիայի և Հայաստանի հարաբերությունները առավել սերտացնելու համար:

Վեհափառ Հայրապետը ջերմ սիրով ողջունեց դեսպանի առաքելությունը, ապա նրա խնդրանքով մանրամասն տեղեկություններ տվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեության, Հայ եկեղեցու ավանդությունների և դերի մասին:

Հանդիպմանը ներկա էր Գերմանիայի Հայոց թեմի առաջնորդ Գարեգին արք. Բեգչյանը:

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՆ

Մայր Աթոռի թանգարանային հավաքածուն հարստացավ ևս երկու թանկարժեք նմուշներով: Բեյրութաբնակ հավաքորդ, հնագետ, դրամագետ և պատմաբան, մեր հայրենակից Երվանդ Արաջյանը իր հավաքածուից Մայր Աթոռ Ս. Էջմիածնին նվիրաբերեց երկու անգնահատելի արժեքներ՝ Ս. Գրիգոր Լուսավորչի փոքրիկ կավե կիսանդրին (6-րդ դարի աշխատանք) և Արտաշիսյան ու Ռուբինյան շրջանների 20 մետաղադրամների հավաքածուն: Նմուշները պրն. Արաջյանի երկար տարիների հետևողական աշխատանքի և համառ փնտրտուքի արդյունքն են:

«Այս նվիրատվությունը՝ Մայր Աթոռի և հայրենիքիս նկատմամբ ունեցած իմ սիրո և նվիրվածության արտահայտությունն է», Վեհափառ Հայրապետին արժեքները հանձնելու պահին ասաց պրն. Արաջյանը:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱՐՈՆՈՒՀԻ ՔԵՐՈԼԱՅՆ ՔՈՔՍԻՆ

Սեպտեմբերի 18-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Անգլիայի Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսին: Տիկ. Քոքսը Վեհափառ Հայրապետին հանդամանորեն ներկայացրեց իր նախորդ և ներկայիս Լեռնային Ղարաբաղ կատարած այցելությունների հաշվետվությունը՝ մասնավորապես կանգ առնելով առողջապահական, սոցիալական, կրթական խնդիրների և վերականգնողական աշխատանքների վրա:

Հանդիպմանը ներկա էր նաև երեխաների խնամքի կազմակերպման ծառայության "Bridge" («Կամուրջ») կազմակերպության Կրթության զարգացման բաժնի տնօրեն տիկ. Ռենուկա Ջեյարաջա-Դենթը, որը Վեհափառ Հայրապետին ծանոթացրեց կրթական-դաստիարակչական ասպարեզում իրենց կազմակերպության կողմից իրականացվող և իրականացվելիք աշխատանքների ընթացքին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հարդարժան տիկնանց առաքելությունը, նշեց, որ նման բարձր մարդասիրական վերաբերմունքն ու ուշադրությունը լավագույն սպեղանին են պատերազմի դժվարություններից նոր-նոր դուրս եկած Արցախի ժողովրդի համար:

Հյուրերին ուղեկցում էր գրող-հրապարակախոս Զորի Բալայանը:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՑԱԽՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼԻՔ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 22-ին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արցախում տեղի ունենալիք պատերազմի հետևանքների, ցավի և տառապանքի երևույթների քննարկմանը նվիրված գիտաժողով-հավաքի մասնակիցներին՝ հավաքի կազմակերպիչ, Հայաստանի Հանրապետության Ազգային Ակադեմիայի

անդամ Սեներիկ Հայրապետյանի ուղեկցությամբ: Գիտնականները, որոնք ներկայացնում էին Ամերիկայի, Եվրոպայի և Ասիայի 20 երկրներ, Վեհափառ Հայրապետին ծանոթացրեցին գիտաժողովի նպատակներին՝ ընդգծելով այն միտքը, որ իրենց հավաքը նախ և առաջ նպատակաուղղված է պատերազմները կանխելու և արգելելու ուղիներ որոնելուն, ապա և նրա կործանարար հետևանքները վերացնելու խնդիրների լուծմանը՝ հատկապես ուսումնասիրելով մարդկային ցավի ու տառապանքի հարցը, ջանալով լուծումներ գտնել այդ ուղղությամբ և առաջադրել:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով գիտաժողովի մասնակիցների հումանիստական առաքելությունը, նրանց պարզեց իր հիմնական տեսակետները քննարկվելիք հարցի մասին և ապա իր Հայրապետական օրհնանքը տվեց նրանց և հաջողություններ մաղթեց գիտաժողովի աշխատանքներին:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆ ՊՐՆ. ՊԻՏԵՐ ԹՈՄՍԸՆԻՆ

Սեպտեմբերի 22-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպան պրն. Պիտեր Թոմսընին:

Շուրջ մեկժամյա զրույցի ընթացքում Նորին Սրբությունն ու հարգարժան դեսպանը զրուցեցին Հայաստանի ներկա իրավիճակի, անցած հինգ տարիների ձեռքբերումների և առկա խնդիրների շուրջ:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԿՈՐՏԵՍԻ ԱՐՏԱՔԻՆՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՆ. ԽԱՎԻԵՐ ՌՈՒՊԵՐԵՍԻՆ

Սեպտեմբերի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի նախագահ, Իսպանիայի Կորտեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ պրն. Խավիեր Ռուպերեսը: Վեհարանում հարգարժան հյուրին ընդունեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը:

Անկեղծ զրույցի ընթացքում պրն. Ռուպերեսը Նորին Սրբությանը ներկայացրեց դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում կատարված աշխատանքներին՝ ընդգծելով, որ հանձնաժողովի ողջ ջանքերն ուղղված են այն բանին, որ հակամարտությունը լուծվի միմիայն քաղաքական ճանապարհով:

Վեհափառ Հայրապետը մանրամասն կերպով պարզաբանեց իր տեսակետը՝ դարաբաղյան հարցի արդար լուծման համար որպես հիմք ունենալով մարդկային իրավունքների և ազգերի ինքնորոշման իրավունքի գործադրությունը, խաղաղ և բանակցային եղանակները:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԺԱՆ ՄԱՐԻ ԼՈՐԺԵԻՆ

Սեպտեմբերի 25-ին, ժամը 13.00-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանում Միացյալ Ազգերի Զարգացման Ծրագրի ներկայացուցիչ Ժան Մարի Լորժեն՝ իր պաշտոնավարման ավարտին Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելու նպատակով:

Պրն. Լորժեն Վեհափառ Հայրապետին փոխանցեց Հայաստանից և նրա ժողովրդից ստացած իր ջերմ տպավորությունները և խոր համոզումով ընդգծեց Հայաստանի Հանրապետության զարգացման ճիշտ ընթացքի իրողությունը:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց կազմակերպության հոգածու վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ՝ շեշտելով պրն. Լորժեի և նրա օգնականների բազմօգուտ ծառայությունների դերը մեր նորանկախ պետության և նրա ժողովրդի բարգավաճման գործում:

ԳԱՐԻ ԳԱՍՊԱՐՈՎՆ ԱՅՑԵԼԵՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Սեպտեմբերի 27-ին Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին իր այցելությունը տվեց տաղանդավոր շախմատիստ, աշխարհի չեմպիոն Գարի Գասպարովը:

Ջերմ և մտերմիկ զրույցի ընթացքում աշխարհահռչակ շախմատիստը իր խորին հարգանքն արտահայտեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Նորին Սրբության հանդեպ և սիրով մանրամասն տեղեկություններ հաղորդեց շախմատի օլիմպիադայի ընթացքի մասին: Ապա զրույցն ընթացավ մեր նորանկախ Հանրապետության

անցած ճանապարհի և ներկա կացության շուրջ: Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, գնահատանքով խոսելով անցած հինգ տարիների ընթացքում Հայաստանում կատարված վերափոխումների մասին, նշեց, որ այդ շրջանը իրավամբ կարելի է որակել որպես ազգային վերազարթոնքի և միասնության հնգամյակ: Խոսակցության ընթացքում հարցարժան հյուրը մեծ հետաքրքրությամբ լսեց նաև Նորին Սրբության հաղորդած տեղեկությունները՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գերի, նրա ծավալած գործունեության և եկեղեցում ընթացող վերափոխումների մասին:

Հանդիպման ավարտին Գարեգին Ա Կաթողիկոսը իր հայրական օրհնություններով և բարեմաղթանքներով տաղանդաշատ շախմատիստին նվիրեց Ս. Էջմիածնի և 1988 թվականի երկրաշարժի հուշամեդալները, Ս. Էջմիածնի գանձերը ներկայացնող ալբոմը՝ նրան ցանկանալով նորանոր բարձունքներ և հաղթանակներ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ